

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ
ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՈՒՐԴ**

30 դեկտեմբերի, 2022 թ.

N 55 - Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ
ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵՎ
ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԵՎ/ԿԱՄ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ
ՀԱՄԱՐ ԴԻՄԱԾ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱԼԱՏԻ ԱՆԴԱՄ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏԻ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 14.16.3 կետը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Մինչև ս.թ դեկտեմբերի 30-ը ժամը 18:30 Պալատի աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորման և/կամ անդամակցության համար դիմած ֆիզիկական անձանց դիմումի հիման վրա Պալատի որակավորման և/կամ անդամակցության վերաբերյալ Պալատի խորհրդի որոշումն ուժի մեջ է մտնում դիմումի ընդունման օրվանից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի պաշտոնական կայքում հրապարակվելուց հետո:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ԹԱԹՈՒԼ ՄՈՎՍԻՍՅԱՆ